ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3314 - Ա **23 ապրիլի 2009թ.**

ՆՈՐ ԱՐԵՇԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՅՈՒԲԱ ՎԱՐԴԿԵՍԻ ԱԲՈՎՅԱՆԻ, ՌԻՄԱ ՍՈՒՐԻԿԻ ԱԲՈՎՅԱՆԻ, ՍՊԻՐԻԴՈՆ ՍՈՒՐԻԿԻ ԱԲՈՎՅԱՆԻ, ՎԵՐԱ ՍՈՒՐԵՆԻ ԲԱԼՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Լյուբա Վարդկեսի Աբովյանի (ծնված 01.01.1936թ.), Ռիմա Սուրիկի Աբովյանի (ծնված 10.09.1960թ.), Սպիրիդոն Սուրիկի Աբովյանի (ծնված 06.08.1964թ.), Վերա Սուրենի Բալյանի (ծնված 27.07.1957թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նոր Արեշի 2-րդ փողոցի հ.2 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 452.5քմ, որից 190.2քմ մակերեսով հողամասը Լյուբա Վարդկեսի Աբովյանին, Ռիմա Սուրիկի Աբովյանին, Սպիրիդոն Սուրիկի Աբովյանին, Վերա Սուրենի Բալյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 262.3քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1997 թվականը, 20.09.2008թ. սեփականության իրավունքի վկայագիրը, 20.09.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 29.06.2006թ. հ.2-533 վճիռը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման 30.09.2008թ. հ.8649, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 16.04.2009թ. հ.20/2-Ե/250 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 14.04.2009թ. հ.20-Ել-3260 եզրակացությունը, համաձայն որի Նոր Արեշի 2-րդ փողոցի հ.2 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նոր Արեշի 2-րդ փողոցի հ.2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Լյուբա Վարդկեսի Աբովյանի, Ռիմա Սուրիկի Աբովյանի, Սպիրիդոն Սուրիկի

Աբովյանի, Վերա Սուրենի Բալյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 190.2քմ մակերեսով հողամասին կից 262.3քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 262.3քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Նոր Արեշի 2-րդ փողոցի հ.2 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Նոր Արեշի 2-րդ փողոցի հ.2 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Լյուբա Վարդկեսի Աբովյանի, Ռիմա Սուրիկի Աբովյանի, Սպիրիդոն Սուրիկի Աբովյանի, Վերա Սուրենի Բալյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Էրեբունի թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ